

Քերթան Գոչիտաշվիլի

*Իվանե Ջավախիշվիլիի անվան
Թբիլիսիի պետական համալսարան*

**ԳՈՒՅՆԵՐ ԱՐՏԱՀԱՅՏՈՂ ԲԱՌԱՊԱՇԱՐԻ ԵՐԿՐՈՐԴԱՅԻՆ
ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՀԱՐՑԵՐԸ ՎՐԱՅԵՐԵՆՈՒՄ**

ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ

Հոդվածում քննարկված են գույներ արտահայտող բառապաշարի երկրորդային նշանակությունները վրացերենում և դրանց ուսուցման անհրաժեշտությունը վրացերենի, որպես երկրորդ/օտար լեզվի ուսուցման ժամանակ: Վերլուծված են այն հիմնախնդիրները, որոնք, կարող են հարուցվել ընդհանրապես բառապաշարի և կոնկրետ, գույներ արտահայտող միավորների ուսուցման ժամանակ բառերի երկրորդային (ոչ հիմնական) իմաստների անտեսմամբ: Նյութում բերված են գործնական օրինակներ:

Երկրորդ/օտար լեզվի ուսուցիչները և տեսաբանները նշանակալի մարտահրավերների առջև են կանգնած: Ցանկացած գործող ուսուցչի համար ծանոթ իրավիճակ է, որ լեզվի ուսուցման գործընթացի սահմանափակումը կոնկրետ շրջանակներով, տեսություններով և մեթոդներով չի տալիս ցանկալի արդյունք, առավել ևս այն ժամանակ, երբ գործը վերաբերում է բառապաշարի ուսուցմանը: Տեսաբաններն առաջարկում են երկրորդ/օտար լեզվի բառապաշարի ուսուցման տարբեր եղանակներ և մեթոդներ: (Լեզուների տիրապետման ..., 2008, էջ 145-157), թեպետ, որպես օրենք, ուշադրությունից դուրս է մնում բառապաշարի երկրորդային նշանակությունը, որն, իր էությամբ իսկապես երկրորդական նշանակության չէ: Անվիճելի է, որ լեզու սովորելը, միևնույն ժամանակ, ենթադրում է նաև մշակույթը սովորել: Այս գործընթացում մեծ նշանակություն ունի ուսանողներին նպատակային մշակութային ժառանգությունը, արժեքները սովորեցնելը: Սովորողի մշակութային նորմերը և պատկերացումները, կիշենները և կարծրատիպերը հանդիպում են բոլորովին նոր մշակութային փորձի, որոշ դեպքերում համընկնում են հավատալիքները և պատկերացումները և մշակութային արժեքները, իսկ որոշ դեպքերում այս արժեքները բոլորովին

տարբեր են: Բացի այդ, մշակութային համատեքստի չիմացությունը հնարավոր է ուսանողին հասցնի լեզվից / տեքստից բոլորովին օտարացման, այսպես կոչված ֆրուստրացիոն մակարդակի կամ սխալ մեկնաբանության: Մշակութային փորձի փոխանակման տեսակետից, լեզվի բառային ֆոնդի, բառարանի ուսանումը կարևորագույն բաղադրամասերից մեկն է: Բացի նրանից, որ այն շինանյութ է լեզվի համար (արտասանության և քերականության հետ մեկտեղ), հիմնականում հենց բառապաշարի միջոցով է հնարավոր դառնում սովորողի՝ ուսանելու (նպատակային) մշակույթի սոցիո-մշակութային իրազեկությունների հետ շփումը: «Լեզվաբանությունը և լեզվի ուսուցումը» աշխատության մեջ Դևիդ Վիկինսը գրում է. «Առանց քերականության շատ քիչ բան է հնարավոր փոխանցել (արտահայտել), սակայն առանց բառապաշարի ոչինչ հնարավոր չէ փոխանցել» (Վիկինս, 1972): Որպեսզի լեզուն կատարի իր կարևորագույն գործառույթը, այսինքն՝ հաստատվի հաղորդակցություն, անհրաժեշտ է տիրապետել համապատասխան բառապաշարի և նրա ճիշտ կիրառության կարողության: Թեպետ, ինչ խոսք, բառապաշարային միավորի ուսանումը չի ենթադրում միայն մի լեզվից մյուսը մեխանիկական

թարգմանության իմացում կամ դրա կարողություն, քանի որ բառապաշարը համեմատաբար ավելի խորը շերտեր է պարունակում, քան այդ կարող է երևալ առաջին հայացքից:

Բառապաշարի ուսուցման ժամանակ գոյություն ունի խոչընդոտ, որը հարուցվում է մշակութային գործոններով: Այս ժամանակ ուսանողները դժվարանում են կապել նոր բառապաշարը իրենց մշակութային մտածողության, փորձի հետ, առանձնապես այն ժամանակ, երբ մայրենի լեզվի և նպատակային մշակույթի միջև նշանակալի տարբերություն գոյություն ունի (Հոնգ, 2011):

Հայտնի է, որ տարբեր մշակույթներում բառերը տարբեր իմաստներ են կրում, տարբեր կերպ են ընկալվում (հուզական, գուգորդական կապերի, սոցիալմշակութային ծանրաբեռնման պատճառով): Մինևույն ժամանակ, հենց մշակութային տարբերակվածության պատճառով են բառերը տարբեր մշակութային տարածքներում ձեռք բերում տարբեր խորհրդանշային իմաստներ և մշակութային կոնոտացիաներ: Առանց վերոթվարկյալ գործոնների լիարժեք չի լինի բառապաշարի և ընդհանրապես լեզվի ուսանումը: Ցավոք, լեզվի ուսուցման տեսաբանների և գործող մանկավարժների մոտ այս հարցը հաճախ ուշադրությունից դուրս է մնում:

Վերցնենք, օրինակ, համընդհանուր օգտագործվող *մայր* բառը, որը բոլոր լեզուներում պատկանում է լեզվի հիմնական բառաֆոնդին: Այս բառը իզական սեռի ծնող է նշանակում, թեպետ տարբեր մշակույթներում՝ տարբեր սոցիալական դերերով և ազդեցություններով ինչպես ընտանիքում, այնպես էլ զավակի հանդեպ: Հայտնի է, որ վրացական մշակույթում մոր հետ հուզական կապը երկար է շարունակվում, նա հաճախ մասնակցում է զավակի նշանակալի որոշումների կայացմանը նույնիսկ մեծ հասակում: Մայրը արտահայտում է նաև բազմասերունդ ընտանիքի ամենավազ սերնդի ներկայացուցիչ, ընտանիքի գլուխ իմաստը, որի բոլոր անդամները, բնականաբար, կնոջ կենսաբանական զավակները չեն: Երեւոյն գլխավոր անդամն է այնպիսի շարույթների,

ինչպիսիք են Երեւոյն, Երեւոյն, Երեւոյն, Երեւոյն – ինչը, կարծում ենք, կնոջ նկատմամբ սերտ հուզական կապի ցուցանիշ է, քանի որ մեր բոլոր վերոթվարկյալ բառերը վրացական մշակույթում առանձնահատուկ (դրական և զգացմունքային) հուզական վերաբուրմունք են կրում:

Ինչպես նշեցինք, տարբեր սոցիոմշակութային գործոններով հարուցված տարբերությունները (մասնական կամ լրիվ) իմաստների մեջ որոշ դեպքերում կարող են առաջացնել հաղորդակցական տեղեկագրի ոչ ճիշտ հասկացում կամ ոչ ճիշտ մեկնաբանություն:

Պետք է հաշվի նստել նաև այն հանգամանքի հետ, որ լեզվի բառային ֆոնդն իր բնությամբ ամենից փոփոխական և զգայուն շերտն է լեզվի, որը հեշտությամբ ենթարկվում է սոցիալ-քաղաքական և մշակութային փոփոխությունների: Թեպետ, գոյություն ունեն մշակույթի համեմատաբար կայուն ասպեկտներ, որոնք համեմատաբար պակաս են ենթարկվում փոփոխությունների, և լեզվի բառապաշարն էլ այս կամ այն չափով պահպանում է իր կայունությունը: Այդ թվում են. նախ՝ կրոնը, բարոյական արժեքները, ավանդույթները և ծիսակատարությունները և այլն:

Այս տեսակետից, լեզվի ուսուցման գործընթացում առանձնահատուկ ուշադրություն պետք է դարձվի այսպես կոչված մշակութային կլիշեների, կոնոտացիաների քննարկմանը, որոնք տարբեր են յուրաքանչյուր մշակույթի համար և այդ թվում վրացական սոցիոմշակութային ժառանգության կրողների համար:

Մշակույթը մեզ թելադրում է, որ յուրաքանչյուր խորհրդանշի (կամ խորհրդանշային իմաստ պարունակող բառի) շնորհից իր լրացուցիչ նշանակությունը: Հենց այդ է «տալիս» ճշգրիտ նշանակություն այս կամ այն բառին: Այսպիսով, բառապաշարի ուսուցման ժամանակ, սովորողին, նրա հիմնական նշանակության հետ պետք է մատուցենք նրա *երկրորդային, պերիֆերիկ* նշանակությունները ևս:

Հայտնի է, որ գույներն ունեն իրենց մշակութային-հուզական ծանրաբեռնումը,

որոնք որպես մտածողական կարծրատիպեր են ձևավորված յուրաքանչյուր անհատական մշակույթի համար: Իհարկե, լեզուն սովորողին գույնի հիմնական նշանակության հետ մեկտեղ պետք է հայտնի լինեն նրա երկրորդային նշանակությունները:

Այս տեսակետից հետաքրքիր է «վրացական» *წითელი* բառի վերլուծումը: Վրացական մշակույթում կարմիրը կապված է հուզական վիճակի հետ: օրինակ կարմիր դրոշը փողփողեցնելը նշանակում է այնպիսի բան, ինչը մարդուն բարկացնում է:

ვაწითლებს՝ կարմրելը վրացական մշակույթում կապված է ամոթի, անհարմարության հետ: Բնականաբար, սա աշակերտի ուշադրությունից դուրս չպետք է մնա:

Տարբեր ծանրաբեռնում ունի կարմիր գույնն արտահայտության մեջ՝ *წითელი აგნობი*, ինչը նշանակում է՝ «Գործերդ վատ գնացին, ստիպված եղար ինչ-որ բան (քեզ համար ցանկալի) ընդհատել»:

Երևում է, որ վրացական մշակույթում կարմիր գույնը բացասական տեղեկագրի փոխանցման կարողություն ունի:

Առանձնահատուկ նշանակություն ունի կարմիր գույնը նախկին սոցիալիստական բլոկի ներկայացուցիչների համար, այդ թվում՝ վրացիների համար: Կարմիրն այստեղ որպես հեղափոխության, կոմունիզմի խորհրդանիշ էր ընկալվում: Սոցիալ-քաղաքական փոփոխությունների պատճառով գույնը կորցրել է այս հասկացությունը և ներկայիս դրությամբ այն կարող ենք քննարկել որպես լեզվա-մշակութային արտեֆակտ: Թեպետ, լեզվի լիարժեք ուսանման համար այս փաստի անտեսումը նպատակահարմար չէ:

შავი սևը մշակույթների մեծ մասում բացասական նշանակություն ունեցող գույն է: Այն կապվում է սգի, մահվան հետ: Բացասական իմաստ է պարունակում այն բառակապակցություններում *შავი ბავახი*՝ *սև շուկա*, *შავი ფոխրები սև մտքեր* և այլն:

Մշակութային գործոնի դերը պարզելու համար համեմատենք *սևը* անգլոամերիկյան աշխարհում, որտեղ այն քաղաքականապես ոչ կոռեկտ արտահայտություն է նեգրոիդների ռասայի ներկայացուցիչների հանդեպ, իսկ

վրացական մշակույթում այն քրեածին մտածելակերպի ներկայացուցիչների հետ է կապվում՝ *შავი სამყაროს წარმომადგენელი* – *Շავո՝ սև աշխարհի ներկայացուցիչ, սև*: Բնական է, այս լրացուցիչ իմաստը չիմանալը լեզու սովորողին հնարավոր է հասցնի լրիվ շփոթության և թյուրիմացության:

შავი ღვებ՝ *սև օր* („Շავ զեջ՝օ“՝ «սև օրում է») վրացերենում հնարավոր տիպիկ շրջան (հաճախ, կապված նյութական խնդիրների հետ) է փոխանցում: Բնականաբար, լեզու սովորողի ուշադրությունը պետք է կենտրոնացնենք նաև դրա վրա:

ლორჯი, ციხვერი՝ *կապույտ, երկնագույն* – մի կողմից անգլոամերիկյան, և վրացական և ռուսական մշակույթների միջև, մյուս կողմից, այս գույնի ընկալման մեջ ևս կա տարբերություն (կապույտի աստիճանավորումները անգլոամերիկյան մշակույթներում մինչև վերջ որպես ինքնուրույն նշանակության բառեր չեն ընկալվում):

Նույն տեսակետից, հետաքրքիր է նաև «անզլերեն» կապույտի և վրացերեն կապույտի համեմատությունը: Անզլերենում կապույտը բացասական հույզերի, զգացմունքների հետ է զուգորդվում: *In a blue mood, or having the blues* նշանակում է վատ տրամադրություն ունենալ: Վրացական մշակույթն այս տեսակետից չեզոք է: Երկու մշակույթներում էլ կապույտը մատնանշում է սոցիալական կարգավիճակ, արհեստակրատություն *He is a real blue blood*; Նա երկնագույն արյուն ունի:

Վրացերենում և ռուսերենում այսօր *ციხვერი*՝ *երկնագույն* ոչ ավանդական սեռական կողմնորոշման տղամարդ է նշանակում, ինչը վրացերենի, որպես ավանդական մշակույթի համար, բացասական ծանրաբեռնում ունի: Թեպետ, դա, այսպես ասած, բոլորովին էլ ավանդական զուգորդություն չէ՝ այս վերջին նշանակությունը ամբողջությամբ ծածկել է *երկնագույնի*, որպես ռոմանտիզմի, վեհության խորհրդանիշի հասկացությունը, ինչը լայնորեն տարածված էր վրացական մշակութային տարածքում: Որոշակի տարիքի ուսանողներին, հնարավոր է, այս

տեղեկության մատուցումը ևս նպատակահարմար լինի:

Վրացերենում հանդիպում է *Յարձմբջանջ* բառույթը, որն այսօրվում է այնպիսի մարդի վերաբերյալ, որը սահմանված ժամանակում չի կարողանում ավարտել ուսումը կամ չի կարողանում համալսարան ընդունվելու թույլտվություն ստանալ, և մի փոքր հեգնական երանգ ունի:

Վրացական խոսակցական լեզվում *Յթյանջ*՝ *կանաչ-ը* կիրառվում է որպես դուրս արտահայտող միավոր:

Լեզվի ուսուցիչների ուշադրությունից դուրս չպետք է մնան այս հարցերը:

Վրացական մշակույթին տարածքում *յցոտջեօ*՝ դեղին ունի անձաշակի, սկանդավայինի, բուլվարայինի նշանակություն: Սա պատկանում է մշակութային փոխառությունների թվին, որն իր համընդհանուր տարածվածության պատճառով, եթե կարելի է ասել, վերածվել է համընդհանուր օգտագործվող բառի՝ դեղին մամուլ, *յցոտջեօ թրջեօ, yellow Journalism; желтая пресса*. Հետաքրքիր է, որ վրացալեզու աշխարհում *Yellow pages-ը* չի կարողացել հաստատվել իր ելակետային նշանակությամբ:

Վրացերենի յուրահատկություն պետք է համարվի այն, որ դեղին ունի հիվանդության, վատ լինելու նշանակություն՝ *յցոտջեօ ջերօ յարձեօ*՝ *դեղին գույն ունես, Նանտջեօցօտ յցոտջեօ*՝ *մոսի պես դեղին է:*

Նաճրօսջերօ՝ մոխրագույնը, վրացական սոցիոմշակութային տարածքում համարվում է միապաղաղության, տխուր լինելու, անհետաքրքրության, ոչնչով աչքի չընկնող գույն:

Վրացական մշակույթում, այնպես ինչպես բազմաթիվ այլ մշակույթներում *տջերօ*՝ *սպիտակը*, անարատության, սրբության գույն է: Այն կարող է նույնիսկ բացասական նշանակություն ունեցող բառի իմաստը դրական դարձնել՝ օրինակ՝ *տջերօ Յրջերօ*՝ *սպիտակ նախանձ:*

Սպիտակը նախկին սոցիալիստական ճամբարի երկրներում կոմունիստների թշնամիների, հակառակորդների, որոշակի դասակարգ արտահայտող գույն էր, թեպետ, հայտնի քաղաքական

գործընթացների շնորհիվ այն այսօր վերածվել է հնաբանության:

Յարձօսջերօ՝ վարդագույնը (իր իմաստային տարբերակներով) վրացերենում միամտության, դրականը պարունակող նշանակություն ունի: Դրա ապացույց է *յարձօսջերօ Նաօջաջեօտ յրջեօ*՝ *վարդագույն ակնոցներով նայելը:*

Վրացերենում այն օգտագործվում է նաև դեմքի մաշկի գեղեցիկ գույնի իմաստով՝ *Յթմօն յցաջեօլօն ջերօ Նաճե յթեՅ*.

Վրացերենում այն արտահայտում է նաև իզական սեռի սեռական փոքրամասնության ներկայացուցչի իմաստ, ինչը, պարզ է, նորություն է և անգլալեզու աշխարհից ներմուծված գույնգործություն է:

Մշակույթը մեզ թելադրում է, որ յուրաքանչյուր խորհրդանշանի (կամ խորհրդանշական իմաստ արտահայտող բառի) գույնգործական իմաստ շնորհենք: Հենց սա է «տալիս» այս կամ այն բառին ճշգրիտ նշանակություն, գծում նրա իմաստային դաշտը: Բացի այդ, այն տալիս է լեզուն մինչև վերջ «զգալու» հնարավորություն, այդ պատճառով ուսանողի և ուսուցչի ջանքերը այս ուղղությամբ ևս պետք է ընթանան:

Ուսումնական (ակադեմիական) միջավայրի հետ մեկտեղ, մշակութային իմաստ ունեցող բառարանը լրացնելու համար լավագույն ուղի ենք համարում նպատակային մշակույթի բաղադրամասերի հետ շփումը (ֆիլմեր, գրքեր, հեռուստահաղորդումներ, մամուլ, լեզուն կրողի հետ անձնական կամ վիրտուալ հաղորդակցություն), քանի որ բացի այս մշակութային «ճանրաբեռնվածությունից», հաճախ նրանց իմաստ է շնորհում նաև կոնկրետ համատեքստը: Սովորողն ավելի լավ է մտապահում և ընկալում, երբ ինքն է գիտակցում համատեքստի փոփոխման հետ իմաստի փոփոխությունը: Իսկ վերթվարկյալ բոլոր ակտիվությունները տալիս են այդ հնարավորությունը: Կարծում ենք, գույներ ցույց տվող բառային միավորների ուսանում/ուսուցումը տալիս է դրա լավագույն հնարավորություն: Կարծում ենք, գույներ ցույց ցույց տվող բառապաշարային միավորների ուսանումը մշակութային բաղադրամասի անբաժան մաս պետք է համարենք և

արտացոլենք մեր ուսումնական արտադասարանական) ակտիվություն-
չափորոշիչներում և ուսումնական ներում:
(ինչպես դասարանական, այնպես էլ

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ.

Լեզուների տիրապետման ..., 2008 – Լեզուների տիրապետման համաեվրոպական
իրազեկություններ, Ուսանում, ուսուցում, գնահատում, Թբիլիսի, Սախմեդո, 2008:
Վիլկինս, 1972 - David Wilkins, Linguistics and Language Teaching, London, Edward Arnold. 1972.
Հոնգ, 2011 Myung -Soon Hong, Hyang-Ki Min, Culture-Specific Vocebulary Teaching For Active
Communication, e-flt.nus.edu.sg., 2011

Ketevan Gochitashvili

Ivane Javakhishvili Tbilisi State University

Towards the Teaching of Secondary Meanings of Words, Expressing Colors in Georgian Language

ABSTRACT

It is obvious that foreign language teaching is the teaching of the target culture, as well. Vocabulary is one of the foundation stones in term of sharing cultural experience. Besides the fact that vocabulary is the building material for language, it contains much more deep layers related to the culture of the nation, that's why ability just to translate one lexical unit from one language to another is not enough.

Foreign language theorists and teachers sometimes do not pay adequate attention to the fact, that there are some obstacles caused by cultural differences between learners' native and target cultures. No doubt that in difference cultures words have the different meanings, they are differently loaded emotionally, associatively, socio-culturally, so in the different cultural areas words have gained different symbolic meanings and cultural connotations.

In the current report we are exploring the importance of teaching words cultural connotations while teaching vocabulary expressing colors in Georgian language.

We have come to the conclusions as follows:

- Language teachers are responsible for teaching culturally loaded meanings of vocabulary, expressing colors: Blue _ the color of of romance (one from several culturally loaded meanings) in Georgian. Blue blood _ means someone is from aristocratic family in Georgian.
- Some similarities can be considered as universal cultural data (facts), but teacher should emphasize the similarities in order to make learning process for students more comfortable and familiar: Black _ the color often associated with negative qualities.
- Some `cultural meanings of lexical units might be cultural borrowings (especially between Russian and Georgian languages, from Soviet time period, when both countries were the part of the same political (and partly socio-cultural space): White _ expressing social class, enemies of Soviet authorities in Georgian and Russian.

Differences between languages in this aspect can be considered as cultural peculiarity. Teacher's responsibility is to explain as precise as possible these meanings to avoid any misunderstanding or misinterpretation: Black _ expressing criminals in Georgian and Afro-Americans in English.